

Քաղաքապետ Ճէյմս Հան Զօրակցական Նամակ Յղեց Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ.- Քաղաքապետ Ճէյմս Հան զօրակցական նամակ մը յղեց Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբին: Իր նամակին մէջ ան կը շնորհակալուի Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի ատենապետ Բաֆֆի Համբրանը, Հայկական Յեղասպանութեան ճանաչման գծով ԱՄՆի Քոնկրէսին մօտ իր տարած Հետեւողական աշխատանքին համար:

«Մենք երբեք չենք կրնար ամբողջովին սրբազրել անցեալի սխալները, սակայն կրնանք մեր հաւաքական յիշողութիւնը օգտագործել իրրեւ լաւագոյն զէնքը ճիշդն ու տրամաբանականը գործադրելու այժմու եւ ապագայի ձախողութիւններուն դէմ», կ'ըսէ քաղաքապետը իր նամակին մէջ: Ան կ'աւելցնէ նաեւ, թէ նման հարցեր օրէնսդիր մարմիններուն ուշադրութեան առարկայ դարձնելը կարեւոր նշանակութիւն ունի վստահեցնելու համար, թէ իրրեւ ազգ, մենք չենք մոռնար Յեղասպանութեան Ուխտին որդեգրած սկզբունքները:

Քալիֆորնիոյ «Մելքոնեան» Կրթական Հաստատութեան Սանուց Միութեան Յայտարարութիւնը

Քալիֆորնիոյ «Մելքոնեան» կրթական Հաստատութեան սանուց միութիւնը կը դատապարտէ եւ կտրակոնապէս կը մերժէ ընդունիլ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան Մարտ 16, 2004ին յայտարարած որոշումը՝ «Մելքոնեան» կրթական Հաստատութիւնը Յունիս 2005ին վերջնականապէս փակելու մասին: Այս մասին կը տեղեկանանք Քալիֆորնիոյ «Մելքոնեան» կրթական Հաստատութեան սանուց միութեան ատենապետ Կարօ Գասապեանի ստորագրութիւնը կրող յայտարարութեանէն, ուր միութիւնը կոչ կ'ուղղէ Կեդր. վարչութեան ատենապետ Լուիզ Սիմոնին, նախագահ Պերճ Սեդրակեանին եւ Կեդրոնական վարչութեան անդամներուն, որ անայապաղ յետս կոչեն եւ վերաքննութեան ենթարկեն իրենց այս ազգավնաս եւ անհեռատես որոշումը՝ փակելու համար Համայն Հայութեան պարծանքը հանդիսացող եւ մօտ 80 տարիներու փառաւոր վաստակ եւ աւանդոյթ ունենցող Սփիւռքի միակ զիջերօթիկ երկրորդական վարժարանը՝ «Մելքոնեան» կրթական Հաստատութիւնը, Կիպրոսի մէջ:

Յայտարարութեան մէջ կ'ըսուի. «Արդարեւ, Հաստատութիւնը փակելը շատ ծանր Հետեւանքներ պիտի ունենայ Հայապահպանման տեսակէտով, ո՛չ միայն Կիպրոսի Հայութեան, այլեւ Միջին Արեւելքի եւ Եւրոպայի գաղութներուն համար, ուրկէ «Մելքոնեան» կը յաճախեն Հայ նորահաս ուսանողներ, ստանալու համար միջազգային չափանիշներով ընդունուած բարձրակ ուսում եւ Հազորդուելու իրենց մայրենի լեզուին, մշակոյթին եւ պատմութեան, եւ Հաստատապէս թրծուելու Հայկական ոգիով:

«Արդ, Քալիֆորնիոյ «Մելքոնեան» կրթական Հաստատութեան սանուց միութիւնը կը պահանջէ, որ Հ.Բ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութիւնը չեղեալ նկատէ նոյնինքն Հ.Բ.Ը.Մ.ի նպատակներուն եւ առաքելութեան հակասող վերոյիշեալ իր որոշումը, որ անկասկած ահաւոր վնաս պիտի հասցնէ ազգապահպանումի համար տարուող ճիգերուն եւ Համայն Հայութեան գերագոյն շահերուն, այլ մանաւանդ պիտի վարկարեկէ Բարեգործականի անունը եւ անմահ բարերարներուն աւանդն ու տեսլականը»: